

զրել, Բաւական է պոքրան միայն ասել, որ ամենամշուառ աղքատ կինը,
 «ինձ ևս Աստուած ողորմած է, զեւ ևս երեք օրուան հաց ունիմ ուտելու»
 ասելով իւր ճակատի զարդերից երեք հատ ոսկի գանձանակն է արկանում:
 Եւսկայ.

ԱՐԵԻ:

ԻՄ ՄՕՏ ԵԿ:

Դու մի՛ գար իմ մօտ բաղդի բոպէին,
 Ես չեմ կարօղ քեզ հասկանալ ընաւին,
 Քեզ պատասխանել, մասնակից լինել
 Ձեմ կարօղ իմ մէջ ես ոյժեր գտնել,
 Քո բազմակոհակ աղբիւր զեղեցիկ
 Սասկածիս լողնով կթունաւորեմ,
 Քո լաւ, առաջին, հոտաւետ ծաղիկ
 Անզգուշութեամբս կըռնչացնեմ:
 Իսկ եթէ այրօղ, խեղդօղ վշտի դէղ
 Զգայուն կուրծքումդ հրդեհ գոյացնէ,
 Եթէ ցաւ, անձուկ մթին ամպի պէս
 Քեզ ամենուտեք կշրջապատէ,
 Եւ տանջանքի տակ ընկած վհատած,
 Քեզ ոչինչ նեցուկ չգտար ուրեք,
 Մի բոպէ հանգիստ զուր կլինիս պտուած,
 Դու այն միջոցին, ընկեր, իմ մօտ եկ:

Իշխան Բաղրամյան:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Քրիստոս յարեալ ի մեռելոց, Քանի դար է, որ իւրաքանչիւր տա-
 րի կտօններ Քրիստոսի Յարութիւնը, բայց պիտի գայ արդեօք այն փա-
 փագելի և գերերջանիկ օրը, երբ մենք յարուցած լինելով բարոյապէս ըն-
 կած զրութենից, արժան և իրաւ տօնել կարօղանանք Փրկչի յարութիւնը,
 սիրելով Նորան. որովհետեւ Տէրը ինքն կասէ. «Եթէ ինձ կսիրէք, իմ պա-
 տուիրանները պիտի պահէք. ով իմ պատուիրաններս կպահէ, նա է ինձ սի-
 րօղը»: Սակայն մեր անգաղար լծնամութիւնը, խաբէութիւնը, զրախօսու-
 թիւնը, ետականութիւնը, անարգ նախանձը, արծաթսիրութիւնը, ապերախ-
 տութիւնը և այլն և այլն, Յիսուսի սէրի և յարութեան նշաններ կարօղ են մի-
 թէ համարվել թէ Յիսուսի բոլորովին մահացած թաղված լինելը մեր սրտե-
 րում: Արեւմտ թող զարձեալ և կրկին և միշտ ցանկանք, որ Քրիստոս յա-
 րութիւն առնէ մեր մէջ և լինի մեզ հետ իւր շնորհով, նախապէս մեզ
 պատրաստելով լինելու Նորա հետ մեր սէրով:

Թագաւոր Վայսեր քսանէհնդամեակի պատճառով Վեհափառ Վաթողիկոսը շնորհաւորական նամակով մատոյց նորին Մեծութեանը հայերէն հին ձեռագիր սուրբ Աւետարանը շատ լաւ պահպանված մագաղաթի վերայ գեղեցիկ գրված և պատկերազարդ, Աւետարանը ԺԲ կամ ԺԳ դարի ձեռագիր կհամարվի:

Աւետարանը շատ սիրուն կերպով զարդարված է տնօրինական և ուրիշ ընտիր պատկերներով, Վազմի երեսակողմի արծաթապատի շորս անկիւնում քանդակված են Թաղէոս և Բարդուղիմէոս Առաքեալները, Գրիգոր Լուսաւորիչը և Մեսրոբ Թարգմանիչը, Աջակողմը Գրիգոր Լուսաւորչի աջն է, ձախակողմը—Գեղարդը, իսկ կողքերում—Վաթողիկոսական զաւազաններ, Մէջտեղը զծագրված է մինէով ս. դաստառակը, Վազմի վերջակողմը շինված է շատ գեղեցիկ և ճշգրութեամբ Էջմիածնի պատկերով:

Իւր նամակը և ընծայն Վեհ. Տէրը մատոյց ներքին գործերի նախարարի միջնորդութեամբ և նախարարից պատասխան ընդունեց մարտի 11ից, որով նախարարը կյայտնէ, որ նորին Մեծութիւնն առանձին իմն բարեյօժարութեամբ ընդունելով նամակում յայտնված զգացմունքը և բարեմաղթութիւնները, ճշմարիտ ախորժանքով բարեհաճեց ընդունել մատուցված սրբազան ընծայն: Եւ թէ Թագաւոր Վայսր բարեհաճել է պատուիրել նախարարին յայտնել Վեհափառ Վաթողիկոսին նորին Մեծութեան հոգեկան երախտագիտութիւնը:

Տխուր տեղեկութիւն պիտի հաղորդենք այս անգամ «Արարատի» ընթերցողներին: Ապրիլ ամսիս 9ին Թիֆլիսից վիճակային ատեանը հեռագրով յայտարարեց Սինօղին, որ Թիֆլիսի առաջնորդ Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեան վախճանվել է նախընթաց օրը, Վեհափառ Հայրապետը ցաւելով լսեց այս լուրը, և այս ցաւակցութիւնն հասկանալի է. որովհետեւ լացի Գաբրիէլ Արքեպիսկոպոսի յարգելի անձնական յատկութիւններից, Վեհափառ Հայրապետի առանձնապէս բարերարված անձների թուում, առաջին տեղը հանգուցեալ Գաբրիէլ Արքեպիսկոպոսին կպատկանի, եթէ շատեմք, որ նա միակ անձն է մեր մէջ, որը արժանացաւ վայելել Վեհափառ Վաթողիկոսի այնքան բազմաթիւ սիրալիր շնորհներ, եւ այս միայն ի յարգանս Գաբրիէլ Արքեպիսկոպոսի արժանաւորութիւնների և պարծենալով կյիշենք, կրկնելով սուրբ գրքի խօսքը թէ «արժանի էր որում շնորհս զայս արարիք»:

Առանց հին գործերը յիշելու, որոնք կենսագրութեան կպատկանին և մասամբ ևս գրված են, կատենք միայն, որ Գաբրիէլ Արքեպիսկոպոսի զրուցութիւնը, մինչև Վեհափառ Վաթողիկոսի զահակալութիւնը, շատ և շատ աննախանձելի էր, որ նորան յարգողներին մեծ ցաւ և վիշտ կպատճառէր. Թէոփոնոյում նստած առանց պաշտօնի, ահագին քննութեամբ գրեթէ զատապարտված և նիւթական կողմից յետին վիճակին հասած, մինչև իւր զբոսն ի վաճառ հանելը, Այնուհետև հանգուցեալի զրուցութիւնը սկսեց

բարեգրվել. Ա.Ե.Տ. Վաթողիկոսը նորան Եպիսկոպոսական բարձր աստիճանին արժանացրեց այն պայմանով, որ հանգուցեալն երեք տարի Էջմիածնում պիտի մնար, զաստիճանութիւն անէր հրիտասարդ վարդապետներին և սարկաւազներին և այսպիսի ստորագրութիւն տուաւ թէ ինքն և թէ նորան օժակից Խորէն Եպիսկոպոսն, իւրոյց տկարութիւն առ թելով կամեցաւ վերադառնալ իւր հայրենի քաղաքը, Ա.Ե.Տ. Տէրը թողաւորեց նորան գնալ և նորա կարօտ հանգամանքներն ի նկատի ունենալով ամսական 75 մ. սնունդ յատկացրեց, յանձնելով նորան միւսնոյն ժամանակ Խալիպեան ուսումնարանի շինութեանն և գոյքին հսկել:

Ճեմարանի շինութիւնը սկսելուց ի վեր նորին Ա.Ե.Տ. փառութիւնը կամենալով նորա ընդունակութիւնները և ուսումնական հմտութիւնները ծառայեցնել յօգուտ ազգի և եկեղեցուն, մտածել էր նորան իրրեւակաւոր հոգեւորականին ճեմարանի տեսուչ կարգել: Գարրիէլ Եպիսկոպոսը կ'յօժարէր ընդունել ճեմարանի տեսուչութիւնը Բեսարաբիայի առաջնորդութիւն ստանալու պայմանով, սակայն Ա.Ե.Տ. Տէրը տնհնարին կ'համարէր, բացի ուրիշ պատճառներից, միաւորել այսքան հեռաւոր վիճակի առաջնորդութիւնը և ճեմարանի տեսուչութիւնը, և խօստացած է նորան Թիֆլիսի առաջնորդութիւն, որով և յանձն առաւ Գարրիէլ Եպիսկոպոսը տեսուչութեան պաշտօնը, խօսք տալով Գամիս Էջմիածնում մնալ և Յամիս Թիֆլիսում, միւս ժամանակը փոխանորդ Արքեպիսկոպոս ունենալով այնտեղ:

Մի տարի այսպէս շարունակեց, Արաստանի վիճակին առաջնորդ և ճեմարանի տեսուչ: Այնուհետեւ սկսեց շարունակ Թիֆլիսում մնալ և ճեմարանին տեսչի փոխանորդ ղնել: Թեպէտ թէ փողով և թէ պատուով մեծարեց Ա.Ե.Տ. փառ Հայրապետը Գարրիէլ Եպիսկոպոսին և Արքութեան տիտղոսը շնորհեց և այլն, բայց երբ փորձը ցոյց տուաւ գործին անյարմարութիւնը, Ա.Ե.Տ. փառ Տէրը ազատեց նորան ճեմարանի տեսչի պաշտօնից, պատուիրելով իւր բոլոր ոյժերը գործ ղնել Թիֆլիսի ընդարձակ և բազմակարօտ վիճակը կառավարելու և բարեգրելու համար, որն կշարունակէր մինչև իւր մահը:

Մի տարի կայ, որ հանգուցեալ Գարրիէլ Արքեպիսկոպոսը կգանգատէր աչքերի թուլութեան համար, իսկ վերջին ժամանակ այլ ևս ամենեւին չէր տեսնում գրեթէ: Առհասարակ շատ թոյլ կազմուած ունենալով, վերջին հիւանդութիւնը շատ կարճօրեայ է եղած:

Հարկաւոր է ասել, որ Գարրիէլ Արքեպիսկոպոսը շատ բաղգաւոր անձն էր. Աննետկի վանքը թողնելուց յետոյ ամեն տեղ թէ Փարիզում, թէ Պէտերբուրգում և Մոսկվայում, թէ Թեոդոսիայում, թէ Էջմիածնում ներկայ Ա.Ե.Տ. փառ Վաթողիկոսի օրով, և թէ Թիֆլիսում մեծ համբաւը, փառքը և պատիւը առաջնել են միշտ իւրեանից և ամեն տեղ պատրաստել են ժողովրդին ընդունելու նորան խորին յարգանքով: Ամեն տեղ ամենքը պատրաստ են եղել միշտ ընդունել նորա առաջարկութիւնները և կատարել և նորա ձեռով ծախսված ազգային գումարները չափազանց մեծ են, մեր

ազգի ներկայ հանգամանքների համեմատութեամբ Կիւնիյն ժամանակ շատ ցաւելով պիտի տեսնէր որ այն մեծամեծ յոյսերը և ակնկալութիւններն որով ամեն տեղ ընդունած են հանգուցեալ Փարրիէլ Արքեպիսկոպոսին և պատրաստ են եղել միշտ աշխատակից և գործակից լինել նորան, ոչ մի տեղ չեն պատկաճած:

Փարրիէլ Արքեպիսկոպոսի ծառայութիւնը հին հայկական գրականութեանը մեծ և յարգելի է: Նորա զորարար ոճը, բազմատեսակ հեղինակութիւնների մէջ, զարմանալի քաղցրութիւն և գրաւիչ յատկութիւն ունի: Ըստ ցաւալի է որ ներկայ ժամանակում մեր ազգի մէջ իրաւամբ հռչակած աննման հայկաբանը, առանց բաւական աշակերտ ունենալու, հոգին յանձնվեցաւ:

Նորին Աւհարառութիւնը հեռագրով պատուիրեց Թիֆլ' սի վիճակային տեսանին որ Գրիգոր Արքեպիսկոպոս Սաղինեանին և Աարդան Արքեպիսկոպոսին հրաւիրեն հանգուցեալ Փարրիէլ Արքեպիսկոպոսին օծելու և հանդիսաւոր թաղումն կատարելու:

* * *

«Արշալոյս Արարատեան» լրագրում հետեւեալ դիտողութիւն կարդացինք (մարտի 1, 1880) որ և կառաջարկենք մեր ընթերցողների ուշադրութեանը:

«Հայ եկեղեցւոյ մէջ մտած կրօնական բաժանումները, զորս իրաւամբ ազգային քակտում կնկատեն հեռասես անձեր, իրօք մօտեւս կրկին հարուած մ'ալ կուտայ մեզի: Ինչ որ ալ ըլլայ այն համոզումը թէ կրօնն ու ազգութիւնը տարրեր բաներ են, և թէ թողլով որ մարդուս խիղճն ազատ ըլլայ առ Աստուած ունեցած յարաբերութեան շուղին մէջ, մենք չենք կարող համոզվիլ որ մեր ազգը վարժ ըլլայ այդ իմաստասիրութեան: Մեզի ինչպէս և շատերու համար, ազգութեան զրոշմը ուղղակի կրօնական միութեան մէջ կրնայ անուան մնալ, ապա թէ ոչ մեր ազգէն բազմապատիկ աւելի լուսաւոր և քաղաքակիրթ ազգեր իսկ չպիտի փութային խրտութեամբ նայիլ իրենցմէ կրօնափոխ անհատի մը վրայ: Փորձը ցցուց թէ պապականութիւնն ինչ աղէտներ հասցուց և ինչ ձիւներ բերաւ մեր գլխուն: Ոչ թէ մեր Լուսաւորչական հաւատացելոց թիւը պակսեցունելով, այլ Հայ անունը կրող և Հայու սիրտ ունեցող անձանց թիւը պակսեցունելով: Բազմաթիւ ընտանիքներ այսօր գաղղիացիի լեզու գաղղիացիի անուն և գաղղիացիի սովորութիւնն ունին առանց իսկ խոստովանիլ զիջանելու թէ Հայ հօրմէ ծնած են, և մանաւանդ հաճոյք կղզան ատենք հայը նախատելով և ծաղրելով: Ի՞նչ էր ուրեմն ասոր պատճառը, ի՞նչու համար չեն խորհիր ատենք որ ազգութիւնը տարրեր և կրօնը տարրեր բաներ են, վասն զի այդ կրօնափոխները ոչ թէ համոզմամբ և խղճի մտօք երկնից ուղիղ ճամբան գտած ըլլալու համար իրենց կրօնէքը դարձուցած են մեր կրօնին, այլ լոկ շահու և հայութեան հակա դիճակէն զերծուած ըլլալու համար: Երբ մեր մէջէն անհատ մը կրօնափոխ ըլլայ և ուրիշ մը ատոր ընթացքը պախարակէ, յանկարծ լռուի կեանքն և կրգուչն կրօնն»

«...իւն»-իւնն. «...իւն քան է, սակայն ցաւալին հոն է որ կրօնափոխն այդպէս չմտածէր: Պիտի առարկուի այժմ մեզ անշուշտ, թէ այդ կորուստը մահամետականութեան և ժամանակաւ պապականութեան դիմողներուն պատահած է: Եւ թէ բողոքականութիւնը հայութեան կորուստ չենթադրէր: Բայց ինչ զարմանալի առարկութիւն որ բնաւ արժէք չունի, երբ մտածուի թէ բողոքական կրօնքն ընդունողը բոլորովին անկախ կմնայ և կկլէ Հայոց պատրիարքարանի իրաւասութենէն: Տեսնուած բան է միթէ ազգի մը մէջ զատ և իրարմէ բոլորովին տարբեր 2—3 վարչութիւն:

Մենք շատ տեսած ենք բողոքականներ, որք օտարի մը հետ խօսած ժամանակ, եթէ ըստ դիպի խնդիրն ազգութեան վրայ դառնայ, բոլորովին տարբեր կըցցունեն ինքզինքնին հայութենէ: ոչ թէ մինակ կրօնական դաւանութեանց մասին, այլ նաեւ դաստիարակութեան, հայրենիքի զգացման և ազգային սովորութեանց մասին իսկ: Ի՞նչ է ասոր պատճառը. վասն զի կրօնից փոփոխմամբ, որ մարդկային ազգի գոյութիւն առնելէն ի վեր նորա դարաւոր մայրն է սովորութեանց, բարուց և զգացմանց ալ փոփոխութիւն կըգոյանայ: Եւ միթէ պայծառ կերպով չտեսնուի՞ր նոյն իսկ բողոքական այն երկու հուժկու և քաղաքակիրթ ազգաց մէջ երեցած մրցակցութիւնը (րիվալիթէ) որ իրարմէ յափշտակել կուզեն արեւելքի բրիտանիկայի բողոքականները: Ամերիկացիք Անգլիոյ նախանձուն ենթարկեցան և այս վերջինը իր ուռկանը տարածած է այժմ Փոքր—Ասիոյ Հայ ժողովրդեան վրայ: Ի՞նչ է այս երկու մեծ ազգաց նպատակը, որ միեւնոյն լեզուն և միեւնոյն կրօնն ունենալով իսկ միշտ կըբաղձան որ իրենց յատուկ ազգութեան և յատուկ եկեղեցիին դրօշակին տակ քաշեն օտարազգի բողոքականները: Աշխարհիս մէջ ինչպէս ամեն անհատ, ամեն ընտանիք, նոյնպէս ամեն ազգութիւն և ամեն տէրութիւն ալ իր մասնաւոր շահերն ունի: Ասոնք ամենքն ալ իրենց մեծութիւնը կրփնտռեն: Ամերիկա իր սովորութեամբ և իր գրականութեամբը կսնուցանէ Հայ բողոքականը: Անգլիա ևս նմանապէս: Պապական հայք գաղղիական բարուք, գաղղիական դաստիարակութեամբ և գրականութեամբ սնած են և խիստ քիչ կըգտնուին, որք հայկական գրականութեամբ զբաղին, անոնք ալ իրենց կրօնական զգացմանց անտարբերութեան շնորհիւ: Այո, խիստ ճշմարիտ է այս, կրօնական զգացմանց դէմ անտարբեր եղողն է միայն որ ազգութեանց մէջ անխտրութիւնը կըհասկնայ: Զկայ ջերմեռանդ բողոքական Հայ մը որ սերտ յարաբերութիւն մը ունենայ Լուսաւորչական և պապական հայու մը հետ և անյիշաշար գտնուի անոնց, երբ կրօնական խնդիր մը յուզուի: Ասի փոխադարձաբար է: այսինքն ինչ որ է բողոքական ջերմեռանդն առ Հայ լուսաւորչականն, նոյնն է նաեւ Հայ ջերմեռանդն առ բողոքականն: Եւ քանի որ երկու կրօններն ալ թող չեն տար կրօնական անտարբերութեան, հետեաբար թող չեն տար միութեան և ազգային համաձայնութեան, եթէ մինչև հիմա ասանկ եղած չըլլար, բնական էր որ բողոքականը զատ ազգապետով չափուի ներկայանային աշխարհի առջև և հայութիւննին ճանչելով պատ-

րիարքարանի բացարձակ իրաւասութեան տակ պիտի մտնէին իրենց խղճին և ժողովարանին թողլով կրօնական զգացմանց եռանդը:

Թողումք որ այս ճշմարտութիւնն ամեն օր կրտեսնուի, և ամեն մարդ գիտէ, եթէ նոյն իսկ աշխարհիս վրայէն ծխական արարողութիւնք բողոքովին վերնան և պաշտամանց արտաքին ձևերը ջնջուելով ամեն ազգի մէջ լոկ իրիշը ըլլայ կրօնք կամ նշանաբան կրօնի, դարձեալ զատ անուն ունեցող կրօն մը, չկրնար սկզբամբ և յիմամբ միանալ զատ անուն ունեցող ազգութեան մը հետ: Ուրիշ բան է եթէ ամեն ազգ և ժողովուրդ առանց ամենափոքրիկ տարբերութեան միեւնոյն կրօնն ունենայ, բայց քանի որ ասի երեւակայական բան մ' է, զատ կրօնիւ ազգային միութիւնն ալ քիչ երեւակայական չէ:

Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց շնորհել հետեւեալ կոնգրակներ մինչև ապրիլի 20ը:

Կոնդակ Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանի Կարսի առաջնորդի անունով, Արդահանում նորահաստատ եկեղեցու շինութեան համար հոգաբարձութիւն հաստատելու մասին, որով և կ'որդորէ բանալ այնտեղ հոգևոր ղարոց: Մարտի 27, թ. 151:

Կոնդակ Արդահանի նորահաստատ եկեղեցու շինութեան նորընտիր հոգաբարձութեան, որով կ'հաստատէ հոգաբարձութեան պաշտօնում Յարու-թիւն Սիրունեան ախալցխացի, Եփրեմ Տէր Ստեփանոսեան սղնախեցի, Վահան Յակոբջանեան ախալցխացի և Պետրոս Հայկազունի ալէքսանդրոպօլցի: Մարտի 27, թ. 152:

Կոնդակ օրհնութեան և խրախուսանքի Թիֆլիսի «Հայերէն գրքեր հրատարակելու ընկերութեան», վարչութեան նորընտիր անգամների անունով: Մարտի 27, թ. 154:

Կոնդակ Հին Նախիջևանի Այլապատ գիւղի նորընտիր հոգաբարձուների անունով, որով կ'հաստատէ տեղական հոգևոր ղարոցի հոգաբարձութեան պաշտօնում Մեսրոբ քահ. տէր Յովսէփեան, Յարութիւն տէր Արրահամեան, Յարութիւն Գրիգորեան և Բաբախան Բաբախանեան: Մարտի 27, թ. 155:

Կոնդակ Դարալագեզի Խաչիկ գիւղի նորընտիր հոգաբարձուներին, որով կ'հաստատէ տեղական հոգևոր ղարոցի հոգաբարձութեան պաշտօնում Ստեփանոս Յովսէփեան, Աստուածատուր Մելիք Գալստեան և Մարգար Յակոբեան: Մարտի 27, թ. 156:

Գրութիւն իշխան Լևան Իվանիշ Մելիքովին կովկասեան բանակի հրամանատարի օգնականին, որով կ'շնորհաւորէ նորընկալ պաշտօնը: Մարտի 31, թ. 162:

Կոնդակ ի պատասխանի գրութեան Թիֆլիսի Ս. Գայիանեան օրիորդական միջնակարգ հոգևոր վարժարանի վարչութեան, որով գոհունակութիւն կը յայտնէ նոյն վարչութեան եռանդուն գործունէութեան համար: Մարտի 31, թ. 163:

Առնգակ ի պատասխանի գրութեան Ներսէս Արքեպիսկոպոսին Վ. պօլսի Պատրիարքին ինչ ինչ ամուսնական խնդիրների համար, որով կ'պատուիրէ միանգամայն զգուշանալ և Հայաստանի Ս. Եկեղեցու օրէնքների համաձայն վարվիլ, Ապրիլի 14, Թ. 164

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐ.

Ի 23 յունվարի 1880 ամի: Որովհետև ըստ հաւաստութեան վիճակային կոնսիստորիային Հայոց Տփլիսու ի Կուկիայ սուրբ Աստուածածին եկեղեցոյ Տփլիսու զոյ կարեւորութիւն այլ եւս միոյ քահանայի եւ առաջարկեալ սարկաւազ Յարութիւնն Առաքելեան ընդունակութեամբ եւ բարեբարոյ վարուք արժանաւոր է կոչման քահանայութեան, վասն որոյ եւ յանձնել վիճակաւորին Հայոց Տփլիսայ Գեր. Գարբիէլ Արքեպիսկոպոսի վերածել զնա յաստիճան քահանայութեան գլխի սրբոյ Զատիկին ի վերայ այնր եկեղեցոյ համաձայն խնդրոց ժողովրդականաց նորին, եւ զվկայականն մատուցանել ի հաստատութիւն Սինօդիս, միայն այնու զի չյանձնեսցի նմա խոստովանութիւն ժողովրդեան ըստ փորձութեան հասակին, այլ խոստովանութիւն առնիցէ ընկերակից քահանայն մինչ ցհաստնելն նորա յերեսնամեայ հասակ: Զայսմանէ ծանուցանել եւ Կոնսիստորիային եւ Հոգարարձութեան Ներսէսեան Ազգային հոգեւոր դպրոցին Հայոց Տփլիսու առանձինն հրամանօք, վերադարձուցմամբ ուսման եւ ծննդեան վկայականացն վասն յանձնելոյ ըստ պատկանելոյն:

Ի 28 յունվարի 1880 ամի: Գծադրութեամբ վերոյգրեալ յայտարարութեան Հոգարարձութեան հրամանագրել վիճակային Կոնսիստորիային Հայոց Երեւանայ յայս վերջին անգամ սաստիկս պատուիրել երեցփոխանաց եկեղեցեաց Հայոց Երեւան քաղաքի եւ զործակալաց Նոր Բայազիդու, Երեւանայ, Սուրմալուայ եւ Էջմիածնայ գաւառաց զի նորա անյապաղ վճարեսցեն զսահմանեալ յւերաքանչիւր եկեղեցեաց տարեկան զումարս, եւ զ50ական կոպէկէ մինչ ց50ական կոպէկս ստացեալքս ի պակաստեարց ի նոյաւստ թեմական դպրանոցին Երեւանայ, մնացեալ որպէս յանցեալ ամաց, նմանապէս եւ այսուհետեւ անխափան շարունակեսցեն զայս ամ ըստ ամէ:

Ի 28 յունվարի 1880 ամի: Զառաջարկեալ ղիտողութիւն փոխանորդ Գրիգոր Արքեպիսկոպոսի գտեալ օգտաւէտ, տալ հրաման նորին զերապատութեան կառավարել զՆոր Արշալոյս օրիորդական դպրոցն Հայոց Ախալցխոյ, առանձինն Հոգաբարձութեամբ, որպէս ցարդ կառավարէր, եւ առաջարկել հայազգի ժողովրդականաց տեղւոյն ընտրել զնոր հոգաբարձուս ի տեղի հրաժարելոցն վասն Նոր Արշալոյս անուանեալ Հոգեւոր դպրոցին, այնպէս զի առանձին կազմելով իւրաքանչիւր զորոշ հոգաբարձութիւնս, ուսումնասիրական բարենախանձ եռանդեամբ մրցեսցեն եւ կառավարեսցեն իւրաքանչիւր զդպրոցսն իւրեանց, միայն ընդունելով զուսումնական եւ գիրթական ծրագիրս եւ զայլ կարեւոր հրահանգս ի թեմական վերատեսչէ Վրաստանի եւ Իմերեթի:

Ի 6 փետրվարի 1880 ամի: Համաձայն բարեհաճութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս զղտանեցեալ ի զանձարանի Սինօդիս ի պահպանութեան զբանկային տոմ-